

Հանդիպում՝ մարզի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամների հետ

18.08.2015թ.

Այսօր Սյունիքի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում Սյունիքի մարզի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատությունների, քաղաքացիական հասարակության կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

«Վարչապետի հանձնարարությամբ, «աշխատանքի և սոցիալական հարցերի և «առողջապահության նախարարների համատեղ հրամանով հաստատված համագործակցության հուշագրի համաձայն՝ իրականացվում է «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագիրը»:

Այն իրականացվում է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հետ, որը «Սթիթչինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդ» կազմակերպության, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպության հետ համագործակցությամբ և Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «մարզերում իրականացնել պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված իրազեկման և քարոզչական աշխատանքներ, զարգացնել «մարզերում պետական կառավարման մարմինների, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ու համայնքների կարողությունները, յուրաքանչյուր մարզում ձևավորել և վերապատրաստել խորհրդատվական աշխատանքային մեկ խումբ, ինչպես նաև մշակել հանրային իրազեկման տեղայնացված գործիքներ և ապահովել նրանց փորձի փոխանակումն ու փոխգործակցությունը»:

Կարևորվեց մարզի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի ներգրավումը և ակտիվ մասնակցությունը, որը հնարավորություն կընձեռի արդյունավետ և համակարգված կերպով իրականացնել իրենց գործառույթները՝ Հայաստանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների հաստատման, գենդերային բռնության դեմ պայքարի պետական քաղաքականության և ծրագրերի իրականացման գործում:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին և մանրամասն քննարկվեցին «մարզերում և համայնքներում ծրագրով նախատեսվող գործողությունները և միջոցառումները, նկարագրվեց փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի և դրա խմբերի գործունեությունը»: